19.11.2020
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ

Հավելված
ՀՀ կառավարության 2020 թվականի
նոյեմբերի 18-ի N 1813 - Լ որոշման

Կ Ա Ր Գ
ԱՐՑԱԽՈՒՄ ՀԱՇՎԱՌՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ

1. Սույն կարգով կարգավորվում են Ադրբեջանի կողմից 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սանձազերծած պատերազմի հետևանքով տեղահանված և փաստացի Հայաստանի Հանրապետությունում գտնվող կամ Արցախ վերադարձած Արցախում հաշվառված քաղաքացիներին (այսուհետ՝ շահառու) աջակցության տրամադրմանը (նշանակելուն և վճարելուն) առնչվող հարաբերությունները:

2. Աջակցությունը տրամադրում (նշանակում և վճարում) է Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության սոցիալական ապահովության ծառայությունը (այսուհետ՝ Ծառայություն), էլեկտրոնային եղանակով ներկայացվող դիմումի հիման վրա:

3. Դիմումը ներկայացնելու համար անձը մինչև 2020 թվականի դեկտեմբերի 20-ը online.ssa.am կայքէջից մուտք է գործում համապատասխան ծրագրային միջավայր և Ծառայություն է ներկայացնում՝

1) եթե դիմումը ներկայացնելու պահին շահառուն չափահաս է, ապա շահառուի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը.

2) եթե դիմումը ներկայացնելու պահին շահառուն անչափահաս է, ապա ծնողի անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը, երեխայի անունը, ազգանունը, ծննդյան վկայականի էլեկտրոնային լուսապատճենը.

3) շահառուի (սույն կետի 2-րդ ենթակետում նշված դեպքում՝ ծնողի) հետ հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեն և բջջային հեռախոսահամարը:

4. Ծառայությունը, առցանց ռեժիմում դիմումով ներկայացված տվյալները համեմատում է (համադրում է) բնակչության պետական ռեգիստրի, քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված՝ մահվան ակտերի գրացման վերաբերյալ տվյալների, Արցախի Հանրապետության կենսաթոշակառուների հաշվառման տվյալների բազայի, «Եկամտային հարկի և սոցիալական վճարի անձնավորված հաշվառման մասին» Արցախի Հանրապետության օրենքով նախատեսված տեղեկատվական բազայի տվյալների, Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տեղեկատվական բազայի տվյալների հետ, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012 թվականի դեկտեմբերի 20-ի N 1676-Ն որոշմամբ հարկային մարմնից ստացված տվյալների, Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տվյալների հետ և մերժում է կամ հաստատում է կամ հաշվառում է դիմումը:

5. Դիմումը մերժվում է, եթե՝

1) ներկայացված տվյալները հավաստի չեն (ներկայացված տվյալները չեն համապատասխանում բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալներին).

2) դիմումը ներկայացնելու պահին քաղաքացիական կացության ակտերի գրանցման մարմիններից ստացված տվյալների համաձայն՝ առկա է շահառուի մահվան պետական գրանցում.

3) շահառուն չունի Արցախի հաշվառում.

4) դիմումը ներկայացնելու պահին շահառուն անչափահաս է, և ծնողը չի հանդիսանում Արցախում հաշվառված քաղաքացիների աջակցության միջոցառման շահառու.

5) շահառուի համար Հայաստանի Հանրապետությունում հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ 2020 թվականի հունվարի 1-ից մինչև

սեպտեմբերի 30-ն ընկած որևէ ժամանակահատվածի համար, կամ նույն ժամանակահատվածում նա Հայաստանի Հանրապետությունում հաշվառված է եղել որպես անհատ ձեռնարկատեր (2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ հանդիսացել է Հայաստանի Հանրապետությունում հաշվառված անհատ ձեռնարկատեր կամ որպես անհատ ձեռնարկատեր գործունեությունը դադարեցրել է 2020 թվականի հունվարի 1-ից մինչև սեպտեմբերի 30-ն ընկած ժամանակահատվածում).

6) շահառուի անվամբ 2020 թվականի հոկտեմբեր ամսվա համար Արցախի պետական կամ համայնքային բյուջեից հաշվարկվել է աշխատավարձ կամ դրան հավասարեցված այլ եկամուտ.

7) շահառուն արական սեռի է, ծնվել է 1962 թվականի նոյեմբերի 10-ից (ներառյալ) մինչև 2002 թվականի սեպտեմբերի 27-ը (ներառյալ) և չունի 1-ին կամ 2-րդ խմբի հաշմանդամություն.

8) 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ շահառուն ունի Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում կենսաթոշակ ստանալու իրավունք, և 2020 թվականի հոկտեմբեր ամսվա կենսաթոշակի չափը կազմում է 68000 դրամից ավելի.

9) համաձայն Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հունիսի 22-ի N 884-Ն որոշմամբ սահմանված՝ Հայաստանի Հանրապետության սահմանային էլեկտրոնային կառավարման տեղեկատվական համակարգում առկա տեղեկությունների՝ շահառուն 2020 թվականի նոյեմբերի 16-ի դրությամբ չի գտնվել Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում.

10) շահառուի համար առկա է հաստատված դիմում:

6. Եթե դիմումը չի մերժվում, ապա Ծառայությունը, բացառությամբ սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դեպքի, ինքնաշխատ եղանակով հաշվարկում է միանվագ դրամական օգնության չափը և՝

1) եթե հաշվարկված միանվագ դրամական օգնության չափը 1000 դրամ կամ ավելի է (այդ թվում՝ եթե միանվագ դրամական օգնությունը հաշվարկվել է 68000 դրամի չափով), ապա հաստատում է դիմումը և շահառուի տվյալները ներառում է վճարման ցուցակում.

2) եթե հաշվարկված միանվագ դրամական օգնության չափը պակաս է 1000 դրամից, ապա մերժում է դիմումը:

7. Եթե սույն կարգի 3-րդ կետի 2-րդ ենթակետում նշված դիմումը չի մերժվում, ապա Ծառայությունը հաշվառում է դիմումը:

8. Ծառայությունը, սույն կարգի 7-րդ կետում նշված դեպքում, հաշվառված դիմումով ներկայացված՝ անչափահաս շահառուի ծնողի վերաբերյալ տվյալները համեմատում է (համադրում է) շահառուի ծնողյան վկայականի էլեկտրոնային լուսապատճենում նշված՝ շահառուի ծնողի վերաբերյալ տվյալների հետ: Անչափահաս շահառուի ծնողի վերաբերյալ տվյալները համապատասխանելու (համընկնելու) դեպքում Ծառայությունն ինքնաշխատ եղանակով հաշվարկում է միանվագ դրամական օգնության չափը և՝

1) եթե հաշվարկված միանվագ դրամական օգնության չափը 1000 դրամ կամ ավելի է (այդ թվում՝ եթե միանվագ դրամական օգնությունը հաշվարկվել է 68000 դրամի չափով), ապա հաստատում է դիմումը և շահառուի տվյալները ներառում է վճարման ցուցակում.

2) եթե հաշվարկված միանվագ դրամական օգնության չափը պակաս է 1000 դրամից, ապա մերժում է դիմումը:

9. Սույն կարգի 6-րդ և 8-րդ կետերով նախատեսված դեպքում միանվագ դրամական օգնության չափը հաշվարկում է՝

1) 68000 դրամի չափով, եթե շահառուն 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում չունի կենսաթոշակ ստանալու իրավունք.

2) 68000 դրամի և 2020 թվականի հոկտեմբեր ամսվա կենսաթոշակի տարբերության չափով, եթե շահառուն 2020 թվականի հոկտեմբերի 1-ի դրությամբ Հայաստանի Հանրապետությունում կամ Արցախի Հանրապետությունում ունի կենսաթոշակ ստանալու իրավունք:

10. Եթե շահառուն, համաձայն Հայաստանի Հանրապետության կադաստրի կոմիտեի տեղեկատվական բազայի տվյալների, չունի սեփականության (այդ թվում բաժնային) կամ վարձակալության իրավունքով իրենց պատկանող՝ Հայաստանի Հանրապետությունում գտնվող անշարժ գույք (բացառությամբ՝ գյուղատնտեսական նշանակության հողամասերի), ապա շահառուին տրվում է լրացուցիչ աջակցություն (կեցավայրի ծախսերի փոխհատուցում)՝ սույն կարգի 6-րդ և 8-րդ կետերով հաշվարկված միանվագ դրամական օգնության չափն ավելացնելով 15000 դրամով:

11. Եթե դիմումով ներկայացված՝ անչափահաս շահառուի ծնողի վերաբերյալ տվյալները չեն համապատասխանում (համընկնում) շահառուի ծննդյան վկայականի էլեկտրոնային լուսապատճենում նշված՝ շահառուի ծնողի վերաբերյալ տվյալների հետ, ապա Ծառայությունը մերժում է դիմումը:

12. Սույն կարգի 5-րդ, 6-րդ, 7-րդ և 8-րդ կետերում նշված դեպքում Ծառայությունը դիմումը մերժելու, հաստատելու կամ հաշվառելու մասին անմիջապես էլեկտրոնային հաղորդագրություն է ուղարկում շահառուի հետ հետադարձ կապի էլեկտրոնային փոստի հասցեին: Էլեկտրոնային հաղորդագրությունը պարունակում է սույն կարգի 3-րդ կետում նշված տվյալները, դիմումը ներկայացնելու ամսաթիվը, դիմումը մերժելու դեպքում՝ մերժելու պատճառը, իսկ դիմումը հաստատելու դեպքում՝ հաշվարկված դրամական

օգնության չափը (այդ թվում՝ սույն կարգի 10-րդ կետով նախատեսված լրացուցիչ աջակցության գումարը՝ առանձնացված):

13. Աջակցության գումարը վճարվում է կանխիկ եղանակով՝ Հայփոստի միջոցով: Ծառայությունը, հիմք ընդունելով սույն կարգի 6-րդ կետի 1-ին և 8-րդ կետի 1-ին ենթակետերի դրույթները, եռօրյա պարբերականությամբ ձևավորում է վճարման ցուցակ և այն էլեկտրոնային եղանակով տրամադրում է Հայփոստին:

14. Վճարման ցուցակում ներառվում են շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողի և շահառուի) անունը, ազգանունը, անձը հաստատող փաստաթղթի սերիան ու համարը և վճարման ենթակա գումարը:

15. Վճարման ցուցակը Հայփոստին փոխանցելու օրվան հաջորդող օրը Ծառայությունն այդ մասին հետադարձ կապի բջջային հեռախոսահամարին էլեկտրոնային հաղորդագրություն ուղարկելու միջոցով տեղեկացնում է շահառուներին:

16. Աջակցության գումարը չի կարող արգելադրվել (դրվել արգելանքի տակ), բռնագանձվել կամ հաշվանցվել հաճախորդի պարտավորությունների դիմաց:

17. Եթե դիմումով ներկայացված տվյալների հիման վրա դիմումը մերժվել է, ապա շահառուն մինչև 2020 թվականի դեկտեմբերի 15-ը ներկայացնում է գրավոր դիմում (այդ թվում՝ առանց էլեկտրոնային թվային ստորագրության, e-request.am կայքէջի միջոցով ներկայացված)՝ կցելով մերժման հիմքերին վերաբերող փաստաթղթերի լուսապատճենները: Այս դեպքում դիմումը քննարկվում է՝ հաշվի առնելով լրացուցիչ ներկայացված փաստաթղթերի լուսապատճենները, իսկ դիմումը հաստատվելու՝ շահառուին միանվագ դրամական օգնություն և (կամ) լրացուցիչ աջակցություն նշանակելու դեպքում շահառուի տվյալները ներառվում են վճարման ցուցակ:

18. Սույն կարգով սահմանված կարգով նշանակված միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը վճարվում են շահառուին (անչափահաս շահառուի

դեպքում՝ շահառու ծնողին) կամ նրա տված՝ նոտարական կարգով վավերացված լիազորագիրը ներկայացրած անձին, անձը հաստատող փաստաթղթի հիման վրա:

19. Եթե մինչև 2021 թվականի մարտի 1-ը միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը չեն վճարվում (շահառուն, անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողը կամ լիազորված անձը Հայփոստին չի ներկայացնում գումարը ստանալու պահանջ), ապա Հայփոստը փոխանցված գումարը վերադարձնում է Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ Ծառայությանը տրամադրելով այն շահառուների տվյալները, ում միանվագ դրամական օգնությունը և լրացուցիչ աջակցությունը չեն վճարվել:

20. Սույն կարգի հիման վրա միանվագ դրամական օգնություն և լրացուցիչ աջակցություն նշանակված և շահառուի (անչափահաս շահառուի դեպքում՝ ծնողի, ում տվյալները ներառվել են վճարման ցուցակ) մահվան պատճառով մինչև 2021 թվականի մարտի 1-ը չվճարված գումարը վճարվում է շահառուի ամուսնուն կամ 14 տարին լրացած երեխային կամ Արցախի Հանրապետությունում շահառուի հետ նույն բնակության վայրի հասցեով բնակվող ընտանիքի այլ անդամին, իսկ անչափահաս շահառուի ծնողի մահվան դեպքում՝ շահառուի մյուս ծնողին կամ 14 տարին լրացած քրոջը կամ 14 տարին լրացած եղբորը կամ Արցախի Հանրապետությունում շահառուի հետ նույն բնակության վայրի հասցեով բնակվող ընտանիքի այլ անդամին: Սույն կետի հիման վրա գումարը վճարվում է, եթե մահվան պատճառով չվճարված գումարը վճարելու դիմումը ներկայացվում է մինչև 2021 թվականի մայիսի 1-ը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՎԱՐՉԱՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Է. ԱՂԱՋԱՆՅԱՆ